

Պօլիս կու գայ կրօն. վեճեր կարգադրել վերջ երազա անցնելու՝ ազգ. - քոչք. կենսունակ խնդիրներու համար, կը վախճանի 1 Օգոստ. 1630 ին 82 տարու, բաղուելով Բանկալքիի գերեզմանոցը, որ այժմ անբաշտ անկորուստ պահած ունի դեռ. երկարափակ դամբարանը **Հոգեւոր Տէր** մականուանեալ այդ պատուական հովուականի. ամենագիի հիւանդներ ցարդ կը դիմեն հոն՝ իրբեւ ուխտատեղի: — Գառնելով Ծարեցիի, անկիւս կ'երբայ ուղղակի Վենետիկ ուր 14 ամիս անգործ կը մնայ՝ դիւրութիւններ զգանելուն. կ'անցնի Հոռոմ, հոն ալ Տառնեայ պանդոյր կեանք մը բոլորելու կը հարկադրուի՝ տեղոյն պապադական «Տառատափիւռ.» կղերին յարուցած խռընդոտներուն հետեւանօք, որ — ինչպէս տեսանք ԲՏԱԼԻՈՅ բաժինին մէջ — մաղձով յեցուած էր հանուր Լուսաորբականութեան դեմ: Ծարեցի չմտափր սակայն. հետամուտ կ'ըլլայ որ և է կերպով գլուխ հանելու իրեն վտանգուած սուրբ գործը: Կը մեկնի ՀՕԼԱՆՏԱ, կրօն. տեսակետով այդ ազատ երկիրը, մանաւանդ իմացած ըլլալով որ հայ առեւտրականաց գաղութը մը գոյութիւն ունէր հոն: Կը դիմէ ԱՄՄԳԵՄՏԱՄԻ նշ. էջգեվիներու տպարանին համար տառեր փորագրող Վան Տիքին որ 27 Նոյ. 1658 ին կնքուած պայմանագրով մը յանձն կ'առնէ 3 տեսակ հայ տառեր փորագրել՝ Աձ.աշունչի տպագրութեան համար, ինչ որ սիրական գործին էր քաղցրիկ գործասանց: Վան Տիք 1660ին տակաւին մեկ տեսակ գիր պատրաստած էր. Ծարեցի կ'սկսի սպել Շնորհալիի **Յիսուս Օրդին**. բախտը չունենար սակայն տեսնելու գործին աւարտը. կը հիւրընկայ. մտախուտ մահուան մը կանխատեսութեամբ՝ իր մօտ կը կանչէ Էջմիածնայ միարաններէն Ոսկան Վրդ.ի եղբայր՝ վաճառական Աւետիսն, առաջարկելով անոր որ գործակցի իրեն: Արդէն բաւական պարտքի տակ ինկած էր. ընկերը պիտի հատուցանէր զայն և տպարանին գործառնութենէն զոյանալէք հասոյթին շահակից պիտի ըլլար. իսկ երբ Ծարեցի մեռնէր՝ գործատան տէր պիտի դառնար Աւետիս: Այս աշնիւ Հայր պայմանաորութեան շահադիտական մասը մերժելով առաջարկեց տպարանը նուիրել յանուն **Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգոյի Զօրավարի**: Առ. այս պարտատ էր քե՛զի զրամագլուխ դնելու և քե՛զի անձամբ աշխատելու: Համաձայնութիւնը գոյանայէ վերջ, Ծարեցի կոտակը կը գրէ ու կը վախճանի 1661ի սկիզբը: Իր հիմնած գործատան ստացած մայր-անուրը պահուած է ցվերջ՝ Ֆրանսայի (Մարսիլիա), Իտալիոյ (Լիվօռնօ) և Թուրքիոյ (Կ. Պօլիս և Իզմիր) մէջ յաջորդաբար իրենց տպարանական արդիւնաշատ գործունէութիւնը բոլորած բարեհամբաւ Ոսկանեանց կողմէ, ինչպէս տեսանք այդ երկիրներուն մէջ՝ 26 Ա.-Գ բուսնամարներով: — Այս պանծալի տպարանին տիտղոսն ու բուսնամարն անփոփոխ պահելով, բաւականացանք անոր անունով բազմաթիւ գործողներ ջոկել հատուած առ. հատուած:

**** Աւետիս Էջմիածնց** (Գլըճեան) ծնած է Սպանան. որդին է Թորոսի և Գոնարազիցի: Ծարեցիի մահէն վերջ՝ ինք էր որ վճարեց անոր բողոցած պարտքերը, յետոյ ստիպեց Վան Տիքին՝ որպէսզի փութացունէ անաւարտ տառերուն փորագրութիւնը: Անկատար մնացած **Յիսուս Օրդին**ի փորձերը սրբագրելու խնդիրը հիմայ կը վնասեցունէր զինք՝ հայերէնը շատ տկար ըլլալուն համար: Բանի մը ամիս երկմտելէ վերջ, տեսնելով որ հնար չկայ, սրբագրութիւնները գէշ աղէկ կը կատարէ և կ'աւարտէ զայն: Իր աղճատ հայերէնով սա նետաքրքրական Յիշատակարանն ալ գիրի կ'առնէ. «Վասն որոյ աշխատանք ունիմ ի վերայ այս գործին, քե՛զի զրամով և քե՛զի սօգնութեամբ և քե՛զի ուխտադիր եղեր եմ որ մինչ ի մահս պիտի որ աշխատիմ վասն սուրբ Էջմիածնուն. . . Մատրեան որ մեռաւ, քե՛զի որ ես չեի՝ ո՞վ պիտի տիրէ ի վերայ քերխանային. 1000 մարջիլ չոր պարտք քերխանային, որ 500 մառչիլ չէր արժեր. . . »: Իր շնորհիւ, Հօլանտա դարձաւ Հայոց լուսաւորութեան Բ. հայրենիքը: Վաճառական մարդ մը սակայն ի՛նչ չտիով կրնար գրադիլ տպարանական բազմապահանջ գործով. հակառակ ասոր, կարելին ըրաւ և 1661 ին տպագրեց **Փամագիրք** մը, յաջորդ տարին ալ նոյն գիրքին մեծադիրը: Իր վիճակը պարզած է՝ Էջմիածին ուղղած նամակներով, նաև իր եղբոր՝ Ոսկանի: Այս պարագային կը խելամոխիք՝ 1664 ին Ամսդերտամ դրոշմուած Սաղմոսի Յիշատակարանէն. Աւետիս ալ ևս մինակ չէ, իրեն գործակից ունի Ոսկանի աշակերտ Կարապետ Վրդ. Անդրիանեցին՝ իրբեւ փորձերու սրբագրիչ: Հոն գտնուող վաճառականներ — շատը Զուգլայեցի — նիւբապէս ձեռնառու կ'ըլլան գործին. տպարանը կը բարգաւաճի և հօլանտական նաւեր նոր ապրանք մըն ալ կ'սկսին արտածել. — **Յիսուս Օրդի** 1200 օրինակ, **Սաղմոս** 2700, **Փամագիրք** 3000, որոնք կը փոխադրուին Արեւելք: